Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ք

Երգեմ բանիւ երերգելի
Վէպ հօր իմում հոգեւորի,
Սարգիս Ներհուն վերատեսչի,
Աստուածաբան վարդապետի,

Ճարտարամիտ հռետորի,
Քաղցրաբարբառ քաջախօսի,
Ատենաբան քարոզատուի,
Զունկրնդրողաց սիրտս հաճողի,

Սուրբ սերմ բանին սերմանողի
յՈգի ւ՛ ի սիրտ իւրում Ազգի,
Արդասալիր հունձ քաղողի,
յԵկեղեցւոյ անդաստանի,

Այգւոյ փրկչին ժիր մշակի,
Ցապականչաց զայն պահողի,
Ըզծառս բարի անդ տածողի,
Եւ չար փըշոց բոյս խլողի,

Ընտրելագոյն փոքու հօտի
Ըզգաստ, արթուն եւ. քաջ հովուի,
Ըզմոլորեալ ոչխար գոմի
Ի սուրբ փարախ Տեառն ածողի,

Զ՞հարեալս նետիւ Սադայէլի
Ըստ հոգեւոր փորձ բըժշկի
Եւ յոյժ ճարտար վիրաբուժի
Ի սուրբ պանդոկ դարմանողի,

Ճշմարտութեան ջատագովի,
Սուրբ հարց շաւղաց հետեւողի.
Ծայթս ի հաւատ շառագնողի
Ապացուցմամբ անպարտելի,